թիւնը, աւազակների յանդգնութեան հետզհետէ սատկանալը, անուանի և հարուստ մարդկերանց գերի առնվելը այդ աւազակներից, այդ բոլորը առիթ տուին Վ.օլօ քաղաքի բնակիչներին տեղացիներից միլիցիա կազմել և այդպիսով պաշտպանել հասարակական ապահովութիւնը: Այս շարժման առաջնորդները տեղացի անուանի և հարուստ յոյներ էին, որոնք իրանցին վեց մարդ ընտրեցին և նրանց ուղարկեցին Վ.օլօ քաղաքի կայմակամի մօտ միլիցիա կազմելու թոյլտուութիւնը խնդրելու համար: Կայմակամը այդ մասին իսկոյն տեղեկութիւն տուաց Բ. Դրանը, որը յոյների ցանկութիւնը ապստամբութիւն համարելով, հրամայեց կայմակամին յիշեալ վեց յոյներին Կ. Պոլիս ուղարկել: Կայմակամը նրանց խրեց, ասելով, որ Թիւրքաց կառավարութիւնը ցանկանում է խօսել նրանց հետ Կ. Պոլսում և նոքա Ֆրանսիական նաւով ուղևորվեցին Կ. Պոլիս:

Երբ Ֆրանսիական նաւը Կ. Պոլիս հասաւ, նաւապետին ներկայացաւ Թիւրք պոլիցիան և պահանջեց նրանից յանձնել իրան յանցաւորներին: Նաւապետը չէ համաձայնում, ասելով, որ իր նաւի վրա յանցաւորներ չը կան և որ ծանապարհորդներից ոչ մէկին չի յանձնի պոլիցիականին, մինչև որ Ֆրանսիական դեսպանից հրաման չը ստանայ: Ֆրանսիական դեսպան Ֆուրնիէ հրամայեց նաւապետին, որ նա չը տայ պոլիցիականին յիշեալ վեց յոյներին և նոքա ազատված էին: Յոյները ուղևորվեցին Բոյգարիա, որտեղ մնցապէս կը բնակվեն: Ֆուրնիէի այդ գործի մէջ խառնվելը հաստատում է Թիւրքաց վարչութեան թշուառ և ողորմելի դրութիւնը: Բացի այդ, յիշեալ դէպքը վկայում է, որ Թիւրքաց կառավարութեան հեղինակութիւնը գրեթէ ոչնչացել է:

Պատմում են, որ օրերումս ալբանցի աւազակները Մակեդոնիայում բռնել էին մի գերմանացու, որին աւազակները այն պայմանով էին արձակել, որ գերմանացին նրանց 100 լիրայի հազուստներ հայցնէր և սպառնացել էին սպանել նրան, եթէ այդ պայմանը չը կատարէր: Գերմանական հաւատարմատարը իսկոյն յայտնել է Բ. Դրանը, որ եթէ այդպիսի դէպք գերմանական հպատակի հետ մի անգամ էլ պատահի, իսկոյն գերմանական նաւեր կուղարկվեն Սալոնիկի ջրերը:

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՊԱՐԼԱՄԵՆՏԸ ԵՒ ՓԵՒՐՎԻԻ ՕՐԷՆՔԻ 7-Դ ՅՕԴՈՒԱԾԸ

—

«Голосъ» լրագրի առաջնորդող յօդուածներից մէկի մէջ կարդում ենք հետևեալը:

Արևմտեան Եւրօպայի պարլամենտական կեանքի մէջ գրեթէ միաժամանակ երկու չափազանց նշանաւոր անցքեր պատահեցան: Բրիտանական կառավարութիւնը յայտնեց պարլամենտին, որ նա զատկի տօներից յետոյ կարձակվի և պարլամենտի անդամների ընդհանուր նոր ընտրութիւններ կը նշանակվեն, որպէս զի եկող մայիսից նոր պարլամենտը կարողանայ սկսել իր նիստերը: Այդ յայտնութեան միւսը օրը Ֆրանսիական սենատը 19 ձայների առաւելութեամբ մերժեց մինիստր Ֆէրրիի առաջարկած կրթութեան օրէնքի 7-դ յօդուածը:

Անգլիական կառավարութեան վճիռը պարլամենտի արձակելու մասին անսպասելի նորութիւն էր թէ Լօնդօնի հասարակութեան և թէ պարլամենտի անդամների մեծամասնութեան համար: Դեռ մի քանի օր առաջ կառավարական շրջաններում համոզված էին, որ պարլամենտը ժամանակից առաջ չի արձակվի, որովհետև մինիստրութիւնը ներկայ բոպէն ընտրութիւնների համար անյարմար էր գտնում: Այժմ ամեն բան փոխվել է: Պարլամենտի արձակելը վճռված է, մի քանի շաբաթից յետոյ ընդհանուր ընտրութիւններ կը սկսվեն և մայիսին կը հաւաքվի նոր պարլամենտը:

Այդ անսպասելի փոփոխութիւնը երկու կերպ կարելի է մեկնել. կամ մինիստրութիւնը համոզվեցաւ, որ ընտրութիւնների համար այժմ յարմար բոպէ է և հաւատացած է, որ ինքը այժմեան ընտրութիւնների ժամանակ յաղթող կը հանդիսանայ, կամ նա գուշակում է, որ իր դրութիւնը եկող գարնանը այժմեանից վատ կը լինի և վճռել է իր դրութիւնը փորձի ենթարկել այժմ, քան թէ երբ իր թշնամիների թիւը կաւելանայ:

Այժմ ոչինչից չէ կարելի եզրակացնել, թէ այդ երկու ենթադրութիւններից ո՞րը աւելի հաւանական է, բայց շուտով կորոշվի գործի դրութիւնը: Դանձարանի կանցլերը խոստացել է համայնքների ժողովին շուտով ներկայացնել եկող տարվայ ֆինանսական բիւջէտը: Եթէ դեֆիցիտը աւելի քիչ կը լինի, քան թէ վերջին ժամանակները ենթադրում էին անգլիական քաղաքական շրջաններում, կարելի է ասել, որ կառավարութիւնը կը յաղթի ընտրութիւնների ժամանակ, իսկ եթէ ընդհակառակը դեֆիցիտը ենթադրածից աւելի լինի, ընտրութիւնների ժամանակ մեծ դիւրներ կը պատահեն և նրանց հետևանքը կասկածաւոր է:

Այնուամենայնիւ շատ դժուար է հաւատալ, որ ազատամիտները յաղթող հանդիսանան ներկայ ընտրութիւնների ժամանակ: Նրանց դրութիւնը շատ վատ է այն ժամանակից, երբ կառավարութիւնը լուր տարածեց, իբր թէ ազատամիտները գաղտնի դաշն են կապել իրլանդացի ֆենիոս միտների հետ, որոնք անգլիացիների համար ատելի կուսակցութիւն են ներկայացնում: Այդ լուրերը կատարելապէս հերքելու համար ազատամիտները ժամանակ չեն ունենայ: Նոքա կը ներկայանան ընտրողներին այդ մեղադրանքի ձնշման տակ և կասկածանքի կը հանդիպեն ամբոխի կողմից, որ ատում է իրլանդացի ֆենիոսիստներին և չէ կամենում նրանց զիջումներ անել:

Ինչպէս երևում է անգլիական ազատամիտ կուսակցութիւնը կարող է միայն մի բան անել. փչացնել, քչացնել պարլամենտի պահպանողական անդամների թիւը: Այդ ևս մեծ յաղթութիւն կը լինի: Եթէ անգլիական պարլամենտի ընդդիմադրական կուսակցութիւնը կուժեղանայ, իսկ կառավարչականը կը թուլանայ, մինիստրութեան դրութիւնը այժմեանից վատ կը լինի և նա անկարող կը լինի իրագործել իր փառաւոր դիտաւորութիւնները: Նատ կարելի է, որ կառավարութեան այժմեան առաջնորդը չը կարողանայ իր պաշտօնը վարել և իշխանութիւնը պահպանողական կուսակցութեան մի այլ բաժնի ձեռքը կընկնի:

Ինչ կը վերաբերի Ֆրանսիական սենատի վճռին, նա այնքան նշանաւոր չէ որքան նրա հետևանքները կարող են նշանաւոր լինել: Ֆէրրիի օրէնքի 7-դ յօդուածի մասին եղած վճռողական վիճաբանութիւնների ժամանակ, այդ մինիստրը յայտնեց, որ եթէ 7-դ յօդուածը չընդունվի, այն ժամանակ նա ստիպված կը լինի եզուիտների դէմ «վճռողական միջոցներ» գործ դնել: Այդ ակնարկութիւնը շատ հեշտ է հասկանալ, բայց նրա իրագործելը գրեթէ անկարելի է: Ինչպէս երևում է մինիստրութիւնը մտադիր է արտաքսել եզուիտներին Կարլ տասերորդի օրէնքի հիման վրա, որ մինչև այժմ անփոփոխ է մնացած: Մօտ ապագան ցոյց կը տայ արդեօք կը կատարէ՞ մինիստրութիւնը իր սպառնալիքը, որից ֆրանսիական սենատը չը վախեցաւ:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻ

—

Կ. Պոլիս, 1 մարտի 80

Մեր թերթերը անուղղայ են, հակառակ կառավարութեան հրամանց կը շարունակեն հարատևութեանց լուրեր հաղորդել, թէ բեմանի խարբերդէն ընդունած նամակներովը կը հաստատէ թէ տեղական իշխանութիւնը մեղսակից է չարագործներուն: Քիւրդ խակ-բէյը 50-էն աւելի մարդասպանութիւն ըրած է, և նոր ամբաստանութեամբ մը հարկ կըլլայ որ դատարանին ներկայանայ, երբ ներս, կը մտնէ, նախագահը ոտքի կելլէ ընդ առաջ կերթայ նմա և իր աթոռը կը բազմեցնէ. ամբաստանողներն այս տեսարանին առաջ զլխնին կախած դուրս կելլեն: Կառավարութեան պաշտօնատան մէջ տասիկ մը 18 տարեկան հայ մը կը սպանէ և հանդիստ կը պտրտի. Սօֆիա մը կը կողոպտէ հայ մը, կը բողոքէ մարդը, ոչ ոք կը լսէ. խեղճ գիւղացիները չեն համարձակեր քաղաք երթեկել: Կարծես թէ մնք ալ այս բաները հոգ կընենք, խարբերդ առաջնորդ չը կայ, Պատրիարքարանէ Սրուանձատեանցը տեղապահ կընեն, բայց նա Ակնայ առաջնորդ է, որ մէկուն հանի:

Բղեցիները միշտ կը բողոքեն, թէ Կարնոյ իշխանութիւնը յայտնի պաշտպանութիւն կընէ քիւրդ պէյերու: Մուշէն կը հաղորդեն, թէ կառավարութիւնը բանդէն արձակեր է Խասլլի ըսուած քիւրդերը, որք կառված և աներկիւղ կը կողոպտեն, կը քանդեն հայոց գիւղերը: Մուշի Կարս գիւղի հարստահարիչ Մուսայ—պէյի որդի Միրզոյ-պէյը, որ մարդասպանութեան համար ի բանտի էր, ազատ կը թողուի: Այս Մուսա և Միրզոյ պէյերուն վրայ մի քանի տարի առաջ «Տէյլի Նիուզ»ի մէջ ընդարձակ նամակ մը և փոքրիկ առաջնորդող յօդուած մը հրատարակուեցաւ: Նամակը այդ մարդկանց որ միանգամայն կառավարիչ էին, ինչ հրէշ ըլլալնին կը ցցուներ: Երզնկայէն կը գրեն թէ օրըստօրէ վտանգները կը բազմանան. Մամմուտցիզիւղի հայերն կերթան Ղարապիկ գիւղի հայերէն հարս մը բերել: Քիւրդերը կը յարձկին վրանին, կուգեն կողոպտել, երբ կը դիմադրեն, զէնք կը պարպեն վրանին. առաջնորդը կը բողոքէ, քիւրդերը կը բռնուին, բայց շուտով պիտի արձկուին անչուտ: Սեբաստիոյ Ղարապօյա գիւղի երբեմն կառավարիչ Ավէշան պէյը կը բանտարկուի: Այս անձը աւազակապետ մ'է որ իր ընկերակիցներով շատ չարիք հասուցեր է ժողովուրդին: Ժողովուրդը այս բանտարկութիւնը երջանկութիւն կը համարի, և կը կարծէ թէ Ավէշին-պէյ այդ աւազակապետին արժանաւոր պատիժը պիտի տայ: Բայց ահա Ավէշին Սիվանիկի կառավարիչ կընտրուի, ուր կարուկ պաշտօնեայի մը պէտքը կայ, և այս անձն ալ այդ համբաւը կը վայելէ:

Հայաստանի ամեն տառապանաց վրայ կը յաւելնայ սովը: Արարատեանի ընդունած հեռագիրներն կիմացնեն թէ մինչև հիմա եղած նպաստներովը միայն Վան քաղաքին օգնութիւն կը լինի, գիւղերն անխնամ մնացած են և բնակիչները ծառի արմատներով կապրին, և թէ միայն Վանայ և շրջակայ գիւղերու համար 100,000 ռուբլի պէտք է անմիջական դարմանի համար:

«Մասիս» թղթակիցը այդ սովը բռնի և խորհրդաւոր է կըսէ: Կ. Պոլիս ամեն ոք գիտէ թէ կառավարութիւնը ամառը օգուտ քաղելու եղանակի չորութիւնէն, ամեն հնարք ի գործ դրաւ որ ձմեռը պատուական սով մը լինի, և այս միջոցներն հոս ամենուն ծանօթ են: Կեդրոնական ցանձնաժողովը կաշխատի ամեն կողմէ նուէրներ հաւաքել, Պուլկարիոյ, Ռումանիայի, Բուսիլիի հայք իրենց նուէրներն կը խրկեն: Մանչէստրի սակաւաթիւ հայ գաղթականութիւնը կարծեմք մինչև 1000 անգղլիացի ոսկի պիտի խրկէ: Ամերիկայի դեսպանն յանձնարարական գրեր տուեր է մասնաժողովին առ նախագահն Ամերիկայի, որ հոն ևս յանուն մարդկութեան հանգանակութիւն լինի: Կ. Պոլսոյ հանգանակութիւնը կը շարունակէ, որոյ կը մասնակցին անխտիր բողոքական և հռովմական հասունեան և անթի—հասունեան հայք: Ընկերութեանց գալով, կարծեմք թէ կեդրոնական մասնաժողովը երբ առձեռն ունեցած ստակը սպառէ, ընկերութեանց պիտի դիմէ որ նպաստելու պատրաստակամութիւն յայտնած են:

Բայց այս ամեն հարուածներու վրայ աւելի սաստիկ հարուած մ'ալ տուաւ կառավարութիւնը այս օրերս ժողովուրդին, և որոյ սաստկութիւնը չատ զգալի պիտի լինի մասնաւորապէս Հայաստանի հայոց: Երբ կառավարութիւնը թղթադրամ հանեց շրջաբերութեան, հրատարակեց թէ իբր ոսկի և արծաթ պիտի ընդունի տուրքերու տեղ, և ժողովուրդը բաւական քանակութեամբ ձեռքը պահեց որպէս զի տայ գանձուն. յանկարծ օր մը կառավարութիւնը յայտարարեց, թէ այլ ևս չը պիտի ընդունի ամբողջապէս, այլ միայն % 20 պիտի առնու թուղթ, և մնացածը մաքուր ստակ. աշխատող ժողովուրդը չատ նեղուեցաւ, որովհետև իւր դրամը անշարժ դրամագլուխ պիտի պահէր, և հինգ տարի պէտք էր որ մէկ տարուան տուրքի համար պահած ստակը ձեռքէն հանէր: Ժողովուրդի և մասնաւորապէս հայոց գանգատներու վրայ կառավարութիւնը որոշեց որ այս տարուան մէջ չը ժողովէ տուրքերէ մնացած հին առնելիքները, և մինչ չատերը գոհացեր էին, ահա նոյն կառավարութիւնը յայտարարեց, թէ այլ ևս տուրքերու փոխարէն % 20 թղթադրամն ալ պիտի չընդունի, այլ միայն հին պարտուց տեղ զանոնք պիտի առնէ: Պէտք է խոստովանինք, որ արդարև մէկ կողմէ ժողովուրդը հին պարտքը չը պիտի վճարէ, բայց միւս կողմէ իր ունեցած ստակին մէկ մասն ալ արժէք մը չը պիտի ունենայ և միայն հին պարտուց համար գործածելի պիտի լինի: Ինչ և է այս ալ անցուցինք, Ռուսական առաջին պատերազմէ վերջ, երբ թիւրք կառավարութիւնը տուգանք պիտի վճարէր, չուարած մնացեր էր. Սուլթան Մահմուտ իւր սիրելի խորհրդական Պէզճեան (Ղազէզ) Յարութիւն ամիրայի կը դիմէ և անոր կը յանձնէ այս տագնապալից վիճակէն երկիրը ազատել: Պէզճեան կը յաջողի այս գործին մէջ. տեսակ մը նոր դրամ կը հանէ հրապարակը արծաթով և պղնձով խառնուած, որոյ մէթալիկ անունը կուտայ. Սուլթանը կը յայտարարէ թէ այդ նոր դրամը կառավարութիւնը անխտիր իբր ոսկի պիտի ընդունի, դրամը յարգ կը գտնէ, պատերազմի տուգանքը ամբողջապէս կը վճարուի: 50 տարիներ են որ այդ մեթալիկը Թիւրքիոյ անցուկ դրամը նկատուած է. ոսկիին հետ % 4-է 20 տարբերութիւն ըրած է, և բացի մաքսի գործերէն, ամեն տուրք մէթալիկով կը վճարուի: Մասնաւորապէս մեծ քանակութիւն մը հայոց ձեռքն է, մանաւանդ վերջի պատերազմէ յետոյ Պուլղարիոյ բոլոր մէթալիկը Հայաստան անցաւ, որոյ փոխարէն հայք ոսկի տուին, զի քիչ մը չահ կար հրապարակի գնոյ վրայ: Ահա այս չարաթ Թրքաց կառավարութիւնը արդէն յայտարարութիւն մը կը հրատարակէ, յորում կասէ թէ այլ ևս մէթալիկը պիտի չընդունի, միայն % 5 պիտի ընդունի և % 95 ոսկի: Արդ հիմա խեղճ ժողովուրդը, որոյ բոլոր դրամագլուխը մէթալիկ է, ինչ ընէ. մինչ առաջ 120 դահեկան մէթալիկը մէկ ոսկի օսմանեան կընէր, այսօր 240 դահեկանը այդչափ կարժէ, այնպէս որ փոքրիկ դրամագլուխ ունեցողները, խեղճ գիւղացիները, հայ բեռնակիրները, արհեստաւորները ամենքն ալ մէկ օրուան մէջ իրենց ունեցածին կէսը կը կորսնցնեն. արդէն ունեցածնին դրամաթուղթով կորուսեր էին, այժմ մնացածն ալ մէթալիկի պատճառաւ կը կորսնցնեն:—Թէպէտ և ժողովուրդի ամեն դասը կը հարուածի, բայց գլխաւորաբար հայերն են. Հայաստանի հարստահարութեանց ամենէն գլխաւորը կը համարեմք մեք զայս: Թիւրքիոյ մէջ միայն մէկ թերթ մը համարձակեցաւ բողոքել կառավարութեան դէմ, այդ ալ հայ թերթ մ'էր, Լրագիր, որոյ համար երբէք համակրութիւն չեմք ունեցած ազգային խնդրոց պատճառաւ, բայց պէտք է խոստովանել, որ այս պարագային մէջ արիաբար չարժեցաւ, պաշտպանեց ինչ որ իր պարտքն էր պաշտպանել և Կ. Պոլսոյ հայ մամլոյ պատիւ բերաւ: Լրագիր համառօտ, բայց ազդու և կծու յօդուածով մը ըսաւ թէ կառավարութեան ըրածը խայտառակութիւն է, թէ սնանկութիւնը ուրիշ կերպ չը կրնար լինել: Կակնարկէ թէ ժողովուրդը այն դրամը, որ միայն տերութեան կնիքն վրան լինելուն համար ընդուներ է, հայհոյելով աղբանոց պիտի նետէ իբր անարժէք ինչ. «գէշ տեսակ դրամներն պիտի վերցուին եղեր, կըսէ Լրագիր, լաւը փոխարէնը հատուցանելով կը վերցուին, պատուաւոր կերպիւ վերցուցած ըլլալու համար, և ոչ թէ, գնա այդ ձեռքի մեթալիկդ ինչ կընես ըրէ, ես չեմ առներ այլ ևս ըսելով: Ասի գործ չէ, բարենորոգում չէ, այլ պարզապէս խայտառակութիւն է»: Երբ այս յօդուածը հրատարակուեցաւ անմիջապէս Բ. Դուռը նոյն օրն այդ հայ թերթը կը ջնջէ, զի կը գրէ այդպիսի թերթի մը գոյութիւնը ներելի չէ»—Լրագրի խմբագրութիւնը աւելի կծու յօդուածով մը կը խայտառակէ զկառավարութիւնը և կը քաշուի հրապարակէն: Այսպէս ահա միլիոնաւոր ժողովուրդ մը դրամական մահացու հարուածներ կընդունի, ոչխարի պէս կը լռէ և միայն հայ թերթ մը կը գտնուի որ ձայն կը բարձրացնէ և կը գոհուի:

Հայկակ

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՍԵՓԱԿԱՆ ԹՂԹԱԿՑԻՑ

ԱՍՏԱՊԱԼԱՆ, 12 մարտի: Փոխադրված է ձեր անունով պետական բանկի Թիֆլիսի բաժնի միջնորդութեամբ 1100 ռուբլ յօդուտ Թիւրքիայի հայ սովատանջների: Ցոյս ունինք որ առանց յապաղելու կուղարկէք ուր հարկն է: Նուիրատուների ցուցակը ձեզ փոստով է ուղարկված:

խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ